# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 4-ի թիվ 3 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/4**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի կարիքների համար աշխատանքային աթոռի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել վրիպակ և անհրաժեշտ է Հավելված 1-ով ներկայացված Տեխնիկական բնութագիրը ը ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով հրավերի Հավելված 1-ով ներկայացված ապրանքի նկարագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

«Աշխատանքային աթոռ

Աշխատանքային աթոռի մետաղական կմախքը պետք է պատրաստված լինի մետաղական սնամեջ օվալաձև 30X15X2,0մմ խողովակներից: Աթոռի մետաղական կմախքի զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ և փոշեներկված բարձրակարգ սև գույնի ներկանյութով:

Աթոռի չափսերը

Գետնից մինչև նստատեղ՝ 49սմ,

Գետնից մինչև թիկնակի վերին մասը՝ 83սմ,

Նստատեղի և թիկնակի լայնությունը՝ 49սմ,

Նստատեղի խորությունը մինչև թիկնակ՝ 42սմ,

Թիկնակի բարձրությունը՝ 30սմ,

Թիկնակի և նստատեղի հետևի մասերը պլաստմասե պատյաններով են՝ լցված 25մմ հաստություն և 25կգ/մ3 խտություն ունեցող կահույքի պորոլինով՝ երեսպատված որակյալ, ամուր և դժվարամաշ սև գույնի կտորով:

Մետաղական կարկասի ոտքերին պետք է ամրացվեն 2մմ պատերի և 4մմ գետնին հենվող մասի հաստություն ունեցող պոլիէթիլենից պատրաստված պլաստմասե խցաններ:

Բոլոր միացումները պետք է լինեն պտուտակներով»

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Առաքելյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 05)

Էլ. փոստ՝ a.arakelyan@promotion.am

Պատվիրատու՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ